ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1193-Ա

ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով Վարսենիկ Գևորգի Պետրոսյանի (ծնված՝ 07.09.1961թ.) դիմումը, Դեբեդ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 20.04.1991թ. N-1 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ գրանցամատյան 7193, այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ՝ ***որոշում եմ***

1. Հաստատել Փամբակ համայնք գյուղ Դեբեդ, 9-րդ փողոց, 1-ին նրբանցք, 48 հողամաս հասցեում գտնվող 06-034-0076-0003 կադաստրային ծածկագրով 0,1387 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Վարսենիկ Գևորգի Պետրոսյանի (ծնված՝ 07.09.1961թ.) սեփականության իրավունքը 06-034-0076-0003 կադաստրային ծածկագրով 0,1387 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

3.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ **Ս. ԱՆԱՆՅԱՆ**

04 հոկտեմբերի 2024
գ. Փամբակ